

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022թ. 4-րդ եռամսյակ

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- ԿԼԻՄԱ
- ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ
- ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ԱՆՏԱՌՆԵՐ
- ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ
- ԹԱՓՈՆՆԵՐ



ՀԻՂՈՐՈՇԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

meteomonitoring.am

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	7
1. ԿԼԻՄԱ.....	10
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	19
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	25
Երևան	27
Գյումրի	31
Վանաձոր	34
Ալավերդի.....	37
Արարատ	41
Կապան	42
Քաջարան	43
Չարենցավան	44
Ծաղկաձոր	45
Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր.....	47
4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐ	49
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	50
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	55
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	60
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	66
Սևանա լիճ.....	71
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	82
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	87
Ջրամբարներ	91
Արաքս գետ	93
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	97
6. ԱՆՏԱՌՆԵՐ.....	99
Հավելված 1. Միջին ամսական և տասնօրյակային ջերմաստիճաններն ու շեղումները 1961-1990թթ. համապատասխան նորմաներից 2022 թվականի 4-րդ եռամսյակում	118
Հավելված 2. Ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	121
Հավելված 3. Գետերի ջրերի որակը 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	123
Հավելված 4. Դիտակետերի տեղադրության ցանկ	139
Հավելված 5. Ցուցանիշների ցանկ	156
Հավելված 6. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ	158

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները 2022թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին.....	14
Աղյուսակ 2. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	46
Աղյուսակ 3. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	48
Աղյուսակ 4. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	50
Աղյուսակ 5. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	55
Աղյուսակ 6. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	60
Աղյուսակ 7. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	66
Աղյուսակ 8. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	71
Աղյուսակ 9. Սևանա լճի ջրի որակը 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	76
Աղյուսակ 10. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	82
Աղյուսակ 11. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	87
Աղյուսակ 12. Ջրամբարների ջրալցվածությունը 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	91
Աղյուսակ 13. Ջրամբարների ջրի որակը 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	92
Աղյուսակ 14. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	94
Աղյուսակ 15. Հոդային ծածկույթում մետաղների գերազանցումները ՍԹԿ-ներից 2022 թվականի 4-րդ եռամսյակում.....	99

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 2. Ամսական, սեզոնային տեղումների քանակը	10
Գծապատկեր 1. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը	10
Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից աշնան սեզոնին 1935-2022 թթ.....	11
Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից աշնան սեզոնին 1935-2022 թթ.....	11
Գծապատկեր 5. Ամառային օրերի քանակը 2022 թվականի աշնանը և դրանց նորման	12
Գծապատկեր 6. Տեղումներ, հոկտեմբեր 2022թ.	20
Գծապատկեր 7. Տեղումներ, նոյեմբեր 2022թ.	22
Գծապատկեր 8. Տեղումներ, դեկտեմբեր 2022թ.	24
Գծապատկեր 9. մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	25
Գծապատկեր 10. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի.....	26
Գծապատկեր 11. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի	26
Գծապատկեր 12. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	27
Գծապատկեր 13. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	28
Գծապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	28
Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	28
Գծապատկեր 16. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	31
Գծապատկեր 17. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	31
Գծապատկեր 18. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	31
Գծապատկեր 19. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	34
Գծապատկեր 20. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	34
Գծապատկեր 21. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	34
Գծապատկեր 22. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	37
Գծապատկեր 23. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	37
Գծապատկեր 24. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	37
Գծապատկեր 25. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	38
Գծապատկեր 26. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	38
Գծապատկեր 27. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	38
Գծապատկեր 27. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	41
Գծապատկեր 28. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	41
Գծապատկեր 29. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	41
Գծապատկեր 30. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	42
Գծապատկեր 31. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	42
Գծապատկեր 32. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	43

Գծապատկեր 33. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	43
Գծապատկեր 34. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	44
Գծապատկեր 35. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	44
Գծապատկեր 36. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	45
Գծապատկեր 37. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	45
Գծապատկեր 38. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	45
Գծապատկեր 39. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	47
Գծապատկեր 40. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	47
Գծապատկեր 41. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	51
Գծապատկեր 42. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	52
Գծապատկեր 43. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները	52
Գծապատկեր 44. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	52
Գծապատկեր 45. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները	53
Գծապատկեր 46. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	55
Գծապատկեր 47. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները.....	56
Գծապատկեր 48. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները	57
Գծապատկեր 49. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները	57
Գծապատկեր 50. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները	57
Գծապատկեր 51. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները	57
Գծապատկեր 52. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը	58
Գծապատկեր 53. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը.....	58
Գծապատկեր 54. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	61
Գծապատկեր 55. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	61
Գծապատկեր 56. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	61
Գծապատկեր 57. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ծախսերի փոփոխությունները.....	62
Գծապատկեր 58. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները.....	62
Գծապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները..	63
Գծապատկեր 60. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները	63
Գծապատկեր 61. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները.....	64
Գծապատկեր 62. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը	64
Գծապատկեր 63. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը.....	64
Գծապատկեր 64. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	67
Գծապատկեր 65. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	67
Գծապատկեր 66. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	67
Գծապատկեր 67. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները	68
Գծապատկեր 68. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	69
Գծապատկեր 69. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները	69
Գծապատկեր 70. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	69
Գծապատկեր 71. սևանի ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը	70

Գծապատկեր 72. սևանի ՋԿՏ-ի դիտակետերի հանքայնացումը	70
Գծապատկեր 73. Մեծ սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	74
Գծապատկեր 74. Փոքր սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	74
Գծապատկեր 75. Մեծ սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	75
Գծապատկեր 76. Փոքր սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	75
Գծապատկեր 77. Մեծ սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	75
Գծապատկեր 78. Փոքր սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	76
Գծապատկեր 79. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	82
Գծապատկեր 80. Արարարտյան ՋԿՏ-ի բնադրյունների ծախսերի փոփոխությունները	83
Գծապատկեր 81. արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները	84
Գծապատկեր 82. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ծախսերի փոփոխությունները	84
Գծապատկեր 83. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները	84
Գծապատկեր 84. Կարճևան գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները	88
Գծապատկեր 85. Վարարակ գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	88
Գծապատկեր 86. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները	88
Գծապատկեր 87. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը	89
Գծապատկեր 88. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը	89
Գծապատկեր 89. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	91
Գծապատկեր 90. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	92
Գծապատկեր 91. Մետաղների պարունակությունը Արմավիրի մարզի քաղաքային հողերում	97
Գծապատկեր 92. Մետաղների պարունակությունը Սյունիքի մարզի քաղաքային հողերում	98

Հապավումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿՉՆ	Կախության չոր նյութեր
ԹԿՊ ₅	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջարկ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի 4-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի, հողերի աղտոտվածության, անտառների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 44 (այդ թվում՝ 5 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով, միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 3 ժամը մեկ անգամ՝ սկսած ժամը 00:00-ից (Գրինվիչի ժամանակով): Մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչ-

Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

ներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի 119 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 55 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Հողերի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվում են ինչպես հղումային տարածքներում, որտեղ առկա են մարդածին նվազագույն ազդեցություններ, այնպես էլ հանքարդյունաբերական տարածքներում կամ քաղաքային հողերում: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվար 25-ի N01-Ն հրամանի համաձայն:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում են մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Կատարված դիտարկումների արդյունքները հրապարակվում են տարեկան տեղեկագրում:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային կոնվեցիաներով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները:

- «Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:


- Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ իրականացնում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների դիտարկումներ Արաքս գետի աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում հանդիպումներ՝ արդյունքների քննարկման և տվյալների փոխանակման նպատակով:

Մակերևութային, ստորերկրյա ջրերի որակի և
քանակի, մթնոլորտային օդի որակի,
հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի դիտացանց




1. ԿԼԻՄԱ

2022 թվականի աշունը դասվեց «էքստրեմալ տաք» աշունների շարքում. այն երկրորդ տաք աշունն էր սկսած 1935 թվականից, ամենատաքը դիտվել է 2010 թվականին: Աշնան միջին սեզոնային ջերմաստիճանը՝ 9.5 °C, նորմայից բարձր էր 2.2 °C-ով, սեզոնային գումարային տեղումները՝ 70.8 մմ, կազմել է նորմայի 59.5 % :



Գծապատկեր 2. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը



Գծապատկեր 1. Ամսական, սեզոնային տեղումների քանակը

Աշնան երեք ամիսներին էլ օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր էին 1961-1990թթ նորմաներից: Հատկապես տաք էին սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները, երբ օդի միջին ամսական ջերմաստիճանները նորմայից բարձր էին համապատասխանաբար 2.4 °C և 2.6 °C, իսկ նոյեմբերին՝ 1.8 °C:


Աշնան սեզոնը շատ չորային էր, այն հինգերորդ չորային սեզոնն էր սկսած 1935 թվականից: Աշնան երեք ամիսներին էլ մթնոլորտային տեղումները ցածր էին նորմայից՝ սեպտեմբերին կազմել է նորմայի 78 %, հոկտեմբերին՝ 60 %, իսկ նոյեմբերին՝ 47 %:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից



Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից աշնան սեզոնին 1935-2022 թթ




Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից աշնան սեզոնին 1935-2022 թթ

Աշնան միջին ջերմաստիճանի աճը 1935-2022թթ. կազմել է 1.0 °C, իսկ տեղումները նվազել են 31.2 %-ով:


Կլիմայական ինդեքսներ

Ամառային օրերի թիվը (SU25 ինդեքս՝ օրերի թիվը տարվա ընթացքում, երբ առավելագույն ջերմաստիճանը 25 °C-ից բարձր է) 2022թ աշնան սեզոնին նորմայից (1961-1990թթ) բարձր է եղել միջինում 9 օր, առավելագույն դրական շեղումը եղել է Թալինում՝ 16 օր, Եղվարդում՝ 15 օր:

Օրական առավելագույն ջերմաստիճանների մեծությունը (TXx) 2022թ աշնան սեզոնին եղել է նորմայից (1961-1990թթ) բարձր բոլոր կայաններում՝ միջինում 6 °C: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Հրազդանում՝ 7.5 °C և Արարատում՝ 8.1 °C:




Գծապատկեր 5. Ամառային օրերի քանակը 2022 թվականի աշնանը և դրանց նորման




Գծապատկեր 6. Օրական առավելագույն ջերմաստիճանների (°C) արժեքները (TXx) 2022 թվականի աշնանը և դրանց նորման

Օրական առավելագույն ջերմաստիճանների ամսական նվազագույնի մեծությունը (TXn) 2022թ աշնան սեզոնին նորմայից բարձր է եղել բոլոր կայաններում, միջինում 3.5 °C, առավելագույն դրական շեղումը դիտվել է Թալինում՝ 6.7 °C, Աշոցքում՝ 5.8 °C:



Գծապատկեր 7. Օրական առավելագույն ջերմաստիճանների ամսական նվազագույն արժեքները (TXn) 2022 թվականի աշնանը և դրանց նորման

Օրական նվազագույն ջերմաստիճանների ամսական առավելագույնի մեծությունը (TNx) 2022թ աշնան սեզոնին եղել է նորմայից բարձր բոլոր կայաններում, բացառությամբ Իջևանի, միջին շեղումը կազմել է 2.8 °C: Առավելագույն դրական շեղումը եղել է Թալինում 8.9 °C, Անանուն լ/ն -ում՝ 6.7 °C:



Գծապատկեր 8. Օրական նվազագույն ջերմաստիճանների ամսական առավելագույն արժեքները (TNx) 2022 թվականի աշնանը և դրանց նորման

Օրական նվազագույն ջերմաստիճանների ամսական նվազագույնի մեծությունը (TNn) 2022թ աշնան սեզոնին եղել է նորմայից բարձր միջինում 4.3 °C: Առավելագույն դրական շեղումը եղել է Մասրիկում՝ 7.9 °C, Ճամբարակում՝ 6.2 °C:

N	Մարզ	Կայան	01.09-10.09	11.09-20.09	21.09-30.09	01.10-10.10	11.10-20.10	21.10-31.10
5	Կոտայք	Ֆանտան	1	1	2	3	5	5
6	Արագածոտն	Թալին	1	1	3	2	4	5
		Ապարան	2	2	2	2	5	5
		Աշտարակ	1	1	1	1	2	2
		Ամբերդ	1	1	2	3	5	5
		Ծաղկաձոր	3	3	5	5	5	5
7	Վայոց Ձոր	Արենի	1	1	1	1	1	2
		Ջերմուկ	1	1	1	1	3	5
8	Սյունիք	Միսիան	1	1	1	1	1	5
		Գորիս	2	3	3	1	2	5
		Մեղրի	1	1	1	1	1	2
9	Արարատ	Արարատ	1	1	1	1	1	1
		Ուրցաձոր	1	1	1	1	1	2
		Անանուն լճաբ	1	1	1	1	1	5
		Արտաշատ	1	1	1	1	1	2
10	Արմավիր	Արմավիր	1	1	1	2	2	2
		Մերձավան	1	1	1	2	2	2


1 – շատ ուժեղ
2 – ուժեղ
3 – միջին
4 – թույլ
5 – երաշտի բացակայություն

Ինչպես երևում է աղյուսակից, գրեթե, բոլոր մարզերի կայաններում սեպտեմբեր ամսվա երեք տանօրյակներում դիտվել է շատ ուժեղ կամ ուժեղ երաշտ, բացառությամբ հյուսիսային շրջանների: Նախալեռնային և լեռնային շրջաններում սեպտեմբեր ամսին դիտվել են երաշտներ, բացառությամբ Լոռու մարզի կայանների:

Արարատյան դաշտում, Մեղրիում և Արենիում սեպտեմբերի առաջին տասնօրյակից մինչև հոկտեմբերի վերջին տասնօրյակը դիտվել է շատ ուժեղ (1-ին կարգ) և ուժեղ (2-րդ կարգ) երաշտ:

Այսպիսով աշնան սեզոնի առաջին կեսը բնութագրվել է երաշտային պայմաններով Հայաստանի շրջանների մեծ մասում :

Արեգակնային ճառագայթում




Աշնան ամիսներին արեգակնային ուղիղ ճառագայթումը բարձր է եղել Արարատյան դաշտում, Շիրակում, Վայոց Ձորում և Սյունիքում

Օդերևութաբանական կայաններում գրանցված կարճալիք ճառագայթման արժեքներն ըստ արբանյակային դիտարկումների բերված են զծապատկեր 10-ում:




2022թ. աշնանը տաք ալիք դիտվել է սեպտեմբերի 1-5-ը, 16-21-ը, սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 8-ը, ինչպես նաև նոյեմբերի վերջին՝ 18-26-ը: Ցուրտ ալիք չի դիտվել: Մի շարք կայաններում տաք ալիքներով օրերի թիվը գերազանցել է երբևէ դիտված առավելագույն օրերի թվին, մասնավորապես Գյումրի և Աշտարակ օդերևութաբանական կայաններում գերազանցվել է համապատասխանաբար 8 և 6 օրով (գծապատկեր 11): Առավելագույն ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից կազմել է՝ 12.7 °C, միջին ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից՝ 12.1 °C:



www.meteomonitoring.am


Աշնան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800 մ բարձրություններում գրանցվել է 1.4 մ/վ, 800-1000 մ բարձրություններում՝ 1.2 մ/վ: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է բարձրալեռնային գոտում (2500 մ-ից բարձր)՝ 3.8 մ/վ, որը սակայն նորմայից պակաս է 0.5 մ/վ-ով :



Գծապատկեր 12. Քամու արագությունը (մ/վ) աշնանը

Օդի հարաբերական խոնավություն


2022թ աշնանը միջին հարաբերական խոնավությունը հիմնականում եղել է նորմայի մոտ, իսկ մինչև 1000 մ բարձրությունները՝ նորմայից ցածր: Առավել չորային է եղել սեպտեմբեր ամիսը:



Գծապատկեր 13. Օդի հարաբերական խոնավությունն (%) ըստ բարձրությունների

Մթնոլորտային ճնշումը

2022թ. աշնանը մթնոլորտային ճնշումը հիմնականում բոլոր բարձրություններում եղել է նորմայից ցածր, միայն բարձրադիր վայրերում դիտվել է նորմայից մի փոքր դրական շեղում (0.5-1):



Գծապատկեր 14. Մթնոլորտային ճնշումն (հՊա) ըստ բարձրությունների


Երևան

Երևանում սեպտեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 23.2 աստիճան, շեղումը նորմայից կազմում է +2 աստիճան: Տեղումների քանակը եղել է 5 մմ, որը կազմում է սեպտեմբեր ամսվա նորմայի 51 %-ը:


Երևանում հոկտեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 15.4 աստիճան, շեղումը նորմայից կազմում է +1.8 աստիճան: Տեղումների քանակը եղել է 15.4 մմ, որը կազմում է հոկտեմբեր ամսվա նորմայի 61 %-ը:

Երևանում նոյեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 7.8 աստիճան, շեղումը նորմայից կազմում է +1.8 աստիճան: Տեղումների քանակը եղել է 7.9 մմ, որը կազմում է նոյեմբեր ամսվա նորմայի 35 %-ը:

Օրական առավելագույն ջերմաստիճանները գերազանցել են երբևիցե դիտված առավելագույն ջերմաստիճանները հետևյալ օրերին՝ սեպտեմբերի 2-ին, 19-20-ը, հոկտեմբերի 4-7-ը:



Գծապատկեր 15. Ջերմաստիճանը Երևանում




Գծապատկեր 16. Տեղումները (մմ) Երևանում

2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոկտեմբերին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 0.5-1 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական ու բացասական շեղումներով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը Տավուշում կազմել է նորմայի 50-100%, Վայոց ձորում՝ 52-62%, Սյունիքում՝ 40-80%, Շիրակում՝ 90-95% (Ամասիա՝ 50%), Կոտայքում՝ 46-68%, Լոռիում՝ 71-88% (Ստեփանավան՝ 117%), Գեղարքունիքում՝ 50-100%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 50-70%, լեռնային շրջաններում՝ 40-45%, Արարատյան դաշտում՝ 54-66% (Արտաշատ՝ 95), Երևան քաղաքում՝ 57-79%:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից



Հոկտեմբերի 1-8-ին, 11-13-ին, 22-24-ին հանրապետությունում դիտվել է առավելապես առամց տեղումների եղանակ:

Հուլիսի 9-10-ին, 21-ին ղիտվել է անձրև և ամայրոպ:




Գծապատկեր 6. Տեղումներ, հոկտեմբեր 2022թ.

Ողջ ամսվա ընթացքում հանրապետության առանձին շրջաններում, առանձին օրեր դիտվել է մառախուղ մինչև 300-500մ տեսանելիությամբ:


Նույեմբեր

2022թ. նոյեմբեր հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից մինչև 2-4 աստիճանով:




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում, երկրորդ տասնօրյակում բարձր 0.5-3, երրորդ տասնօրյակում՝ բարձր 3-5 աստիճանով:

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 15-32%, Վայոց ձորում՝ 50-100%, Սյունիքում՝ 19-23% (Միսիան՝ 110%), Շիրակում՝ 30-45%, Կոտայքում՝ 30-66%, Լոռիում՝ 11-23%, Գեղարքունիքում՝ 33-79%, Արմավիրում՝ 78%, Արարատում՝ 35-52%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 55-96%, լեռնային շրջաններում՝ 44-54%, Երևան քաղաքում՝ 32-51%:



Նոյեմբերի 1-10-ին հանրապետության առանձին շրջաններում (թույլ), 11-ին, 17-ին, 25-26-ին, 30-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:




Գծապատկեր 7. Տեղումներ, նոյեմբեր 2022թ.

Նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետության բարձր լեռնային շրջաններում է միայն ձյան ծածկ ձևավորվել (Արագած Բ/Լ՝ 27սմ):

Առանձին օրեր հանրապետության առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 200-500մ տեսանելիությամբ:

Դեկտեմբեր


Դեկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից մինչև 2-4 աստիճանով, Լոռիում, Տավուշում, Սյունիքում և Արցախում եղել է նորմայի սահմաններում մի փոքր բացասական շեղումով:




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը բոլոր երեք տասնօրյակներում բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով, բացառությամբ Լոռիի, Տավուշի, Սյունիքի և Արցախի, որտեղ առաջին և երրորդ տասնօրյակներում ցածր է եղել նորայից 1-3 աստիճանով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 149-180% (Դիլիջան՝ 43%), Վայոց ձորում՝ 15-37%, Սյունիքում՝ 25-53% (Մեղրի՝ 6%), Շիրակում՝ 42-62% (24%), Կոտայքում՝ 13-21%, Լոռիում՝ 66-121%, Գեղարքունիքում՝ 25-78%, Արմավիրում՝ 45%, Արարատում՝ 32-54%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 27-61%, լեռնային շրջաններում՝ 20-53%, Երևան քաղաքում՝ 32-53%:



Դեկտեմբերի 1-8-ին շրջանների զգալի մասում (թույլ), 13 և 21-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 8. Տեղումներ, դեկտեմբեր 2022թ.

Ողջ ամսվա ընթացքում Արարատյան դաշտում և դրա նախալեռներում, Երևանում դիտվել է մառախուղ 40-500մ տեսանելիությամբ:

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝


- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է Հրազդան և Արարատ քաղաքներում:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



Գծապատկեր 9. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն Երևան քաղաքում:


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



Գծապատկեր 10. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:




Գծապատկեր 11. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների


Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2022 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու և ծծմբի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Ազոտի երկօքսիդների ամսական միջին կոնցենտրացիան նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ, իսկ հոկտեմբեր ամսին միջին ամսական կոնցենտրացիաները մոտ են եղել ՍԹԿ-ին:




Գծապատկեր 12. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




*կախված մասնիկներ

**անհիդրիդ ծծմբային

Գծապատկեր 13. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:

2022 թվականի 4-րդ եռամսյակում Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




**Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**






Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




**Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Պարմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 19. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 20. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 21. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

**Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պայմանական նշաններ




- Պասիվ նմուշառման
դիտակետեր
- Ակտիվ նմուշառման
դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ
և փողոցներ
- Միջպետական
ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




**Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման
դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման
դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ
և փողոցներ
-  Միջպետական
ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 22. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 23. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 24. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն հոկտեմբեր ամսին 1.8 անգամ, նոյեմբեր՝ 1.9 անգամ, իսկ դեկտեմբերին՝ 1.6 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 25. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 26. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 27. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Պայմանական նշաններ

- | | | | |
|--|-------------------------------|--|--------------------|
| | Պասիվ նմուշառման դիտակետեր | | Գետային ցանց |
| | Ակտիվ նմուշառման դիտակայաններ | | Բնակավայրեր |
| | Ճանապարհներ և փողոցներ | | Աղբյուրակ, ջրամբար |
| | Երկաթգծեր | | |

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար


Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան նոյեմբեր ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ, իսկ դեկտեմբերին 1.3 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 28. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 29. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 30. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:



2022 թվականի 4-րդ եռամսյակում Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2022 թվականի 4-րդ եռամսյակում Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 35. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 36. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 37. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 38. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 39. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2022 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է մթնոլորտային տեղումների 4 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 2-ում: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 2. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
09.10.2022	6.32	23.2	2.04	0.51	1.60	0.393
15.10.2022	6.34	58.2	8.07	0.97	5.24	2.345
21.10.2022	6.17	44.1	5.89	0.96	5.06	0.382
26.11.2022	6.06	26.3	2.45	0.81	5.67	0.919

**Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման
մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր**


Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2022 թվականի 4-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($U\theta_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($U\theta_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 40. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 41. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2022 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 7 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 3-ում: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 3. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնայի ն ցուցիչ	Էլեկտրահա ղորդականու թյուն. մկՍմ/սմ	Սուլֆատ իոն. մգ/լ	Քլորիդ իոն. մգ/լ	Նիտրատ իոն. մգ/լ	Ամոնիում իոն. մգ/լ
09.10.2022	6.98	73.0	8.87	1.424	4.062	4.320
21.10.2022	6.60	16.8	6.16	1.587	3.928	4.177
16.11.2022	6.11	15.5	1.842	0.611	1.240	0.434
25-26.11.2022	5.01	18.1	3.587	0.124	1.883	0.414
26-27.11.2022	5.81	6.2	0.323	0.418	0.477	0.145
30.11.2022	5.12	8.1	1.045	0.085	1.161	0.146
07-08.12.2022	4.01	43.9	3.543	1.477	5.288	0.249

4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՍ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2022 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ագատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի էլքի չափումներ): 61 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2022 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 46 գետի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 63 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է

հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն սնուցող նյութերով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 47 չշատրվանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Թումանյան	4.29	6.75	64	3.97	6.94	57	4.08	5.61	73
Դեբեդ	Այրում	11.9	19.8	60	11.7	20.5	57	11.3	16.4	69
Չորագետ	Գարգառ	7.53	9.90	76	7.12	9.96	71	6.83	8.01	85
Աղստև	Իջևան	2.38	5.21	46	2.35	5.11	46	3.19	3.67	87
Գետիկ	Գոշ	0.82	1.83	45	0.86	1.73	50	0.83	1.18	70

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Մայիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև և Այրում քաղաքից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սահմանի մոտ հատվածում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Սարատովկա գյուղից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Գծապատկեր 42. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 43. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 44. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 45. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ԶԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ջրի ծախսը:



Հաղարծին համայնքի N2058 և N2059 դիտակետերում նկատվել է ծախսի աննշան իջեցում:



Գծապատկեր 46. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է N 2058 բնադրյունում, որտեղ հանքայնացման և նիտրատ իոնի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ հիդրոլոգիական դիտակետեր
- ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտությանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Ախտությանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտության	Ախտրիկ	2.97	5.63	53	3.78	5.76	66	4.23	5.72	74
Մեծամոր	Մեծամոր	2.20	18.5	12	2.21	20.9	11	2.53	24.7	10

Մակերևութային ջրերի որակ


Ախտությանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախտության գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գրուղից վերև հատվածում նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ռանչյար գյուղից ներքև հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 47. Մեծամոր գետում ֆոնդատ ինդի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր



Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 40 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի N105, N108, N192, N198, N1521, N1533, N1537, N2001, N2002, N2018, N2021, N2022, N2025, N2026, N2055 և N2057 դիտակետերում նկատվել են մակարդակի բարձրացումներ:


Նախորդ եռամսյակի համեմատ Ակնաշեն, Տարոնիկ (N2001, N2002) համայնքների շատրվանող հորատանցքները սկսել են շատրվանել և դիտարկվել են դրական մակարդակներ: Դեկտեմբեր ամսին N2001 դիտակետի ծախսը կազմել է 0.44լ/վ:

Շիրակի մարզի դիտակետերում հիմնականում նկատվում են աղբյուրների ծախսերի իջեցումներ, բացառությամբ Մարմաշենի N2035 դիտակետում, որտեղ ծախսի ավելացումը անշան է՝ 0.07լ/վ: Աշոցքի N2038, N2039, N2040 և N2077 դիտակետերի աղբյուրներում նկատվել են ծախսերի աննշան իջեցումներ: Աշոցքի N2041 դիտակետում նախորդ եռամսյակի պես դիտարկվել է ծախսի համեմատաբար կայուն վիճակ: Առափիի N2042 դիտակետի ջրհորում նկատվել է ջրի մակարդակի բարձրացում, իսկ Ախուրյանի N2043 դիտակետում դիտվել է ջրի մակարդակի իջեցում: Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին N2053, N2108, N2108 և N2051 դիտակետերում կատարվել են վերանորոգման աշխատանքներ հետագա ճշգրիտ չափումներ կատարելու համար:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 19 դիտակետում: Արտամետի N2083 և Լուսազյուղի N2022 հորատանցքերում, ինչպես նաև Առափիի գրունտային ջրհորի N20242 դիտակետում հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:




Գծապատկեր 49. Ախտության ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 50. Ախտության ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 51. Ախտության ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 52. Ախտության ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները

Նիտրատ իոն


Ախուրյանի ՋԿՏ



Գծապատկեր 53. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը



Հանքայնացում, գ/լ

Ախուրյանի ՋԿՏ



Գծապատկեր 54. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

● Մարզկենտրոն

● Քաղաքներ

● Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

▶ որակի մոնիթորինգի դիտակետեր

▶ հիդրոլոգիական դիտակետեր

▶ Ստորերկրյա ջրերի
մոնիթորինգի դիտակետեր

— Գետային ցանց


— ՀՀ պետական սահման

— Լճեր և ջրամբարներ

— Հարավային ջրավազանային
կառավարման տարածք

Մակերևութային ջրերի
որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ ³ /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.27	3.33	68	2.23	3.44	65	2.19	3.10	71
Հրազդան	Արգել	2.28	3.73	61	2.27	3.69	62	2.09	3.13	67
Հրազդան	Երևան	4.36	3.32	131	5.77	3.94	146	7.31	5.93	123
Մարմարիկ	Հանքավան	0.62	0.48	129	0.60	0.51	118	0.62	0.45	138
Մարմարիկ	Աղավնաձոր	1.11	1.48	75	1.15	1.50	77	1.15	1.33	86
Քասախ	Վարդենիս	0.22	0.53	42	0.21	0.55	38	0.22	0.50	44
Քասախ	Աշտարակ	3.29	2.75	120	3.92	2.93	134	2.49	2.66	94

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև հատվածում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):




Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետատ գետի ջրի որակը գատաբերանում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝

«անբավարար» (4-րդ դաս), իսկ Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):



Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ կատարվել է թվով 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի (Հովտաշեն, Մասիս, Ջրահովիտ) N2053, N1519 և N2007 շատրվանոց հորատանցքերում նկատվել են ծախսերի բարձրացումներ: Մակարդակի իջեցումներ են նկատվում Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 (Արագած), N2086 (Դոդս), N2087 (Աղավնատուն) և N2088 (Լեռնամերձ) դիտակետերում:


Հրազդան գետավազանի N246 (Բջնի) դիտակետում դիտվել է ծախսի իջեցում:

Արագածոտնի մարզում՝ Նիգավանի N2010 և N2011 ջրհորներում նկատվել են գրունտային ջրերի մակարդակի իջեցումներ: Համանման իջեցումներ են նկատվել նաև Ապարանի N2051 «Միրո» աղբյուր դիտակետում:

Ջրի որկաի մոնիթորինգ իրականացվել է 13 դիտակետում: Մասիսի N1519 Ջրահովիտի N2007, Հովտաշենի N2053, շատրվանոց հորատանցքերում հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն:




Գծապատկեր 58. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերի ծախսերի փոփոխությունները

Շատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր 60. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները


Շատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Շատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր 61. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 62. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերի մակարդակների փոփոխությունները

Նիտրատ իոն

Հրազդանի ՋԿՏ





Գծապատկեր 63. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը




Գծապատկեր 64. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Մարզկենտրոն
 Քաղաքներ
 Բնակավայրեր
 Մակերևութային ջրերի
 որակի մոնիթորինգի դիտակետեր
 հիդրոլոգիական դիտակետեր
 Ստորերկրյա ջրերի
 մոնիթորինգի դիտակետեր
 Գետային ցանց
 ՀՀ պետական սահման
 Լճեր և ջրամբարներ
 Հարավային ջրավազանային
 կառավարման տարածք
 Մակերևութային ջրերի
 որակի դասեր
 2-րդ դաս
 3-րդ դաս
 4-րդ դաս
 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 12 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.26	0.33	79	0.22	0.36	61	0.22	0.24	92
Մասրիկ	Ծովակ	1.87	2.98	63	2.04	2.88	71	2.28	2.66	86
Մարտունի	Գեղհովիտ	0.52	0.79	66	0.58	0.82	71	0.55	0.76	72
Արգիճի	Վ. Գետաշեն	1.57	2.33	67	2.94	2.47	119	2.17	2.38	91
Գավառագետ	Նորասու	2.61	2.93	89	2.61	3.01	87	2.65	2.99	89

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Մեմյոնովկա գյուղից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը նոյեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 65. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 66. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 67. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Գրեթե բոլոր շատրվանող հորատանցքերում դիտվել են մակարդակների բարձրացումներ:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Հանքայնացումն ու նիտրատ իոնի պարունակությունը չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 68. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները

Շատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 69. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Շատրվանող հորատանցքեր
Ծախս, լ/վ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 70. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փնների ուփոխությունները

Չշատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 71. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Նիտրատ իոն


Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 72. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը

Հանքայնացում, գ/լ

Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 73. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերի հանքայնացումը

Սևանա լիճ

2022 թվականի 4-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

**Աղյուսակ 8. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2022 թվականի 4-րդ եռամսյակում
Հոկտեմբեր**

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվ ա ընթաց - քում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	8.04	9.72	12.18	29.94	20.7	38.0	57.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.78	0.74	0.83	2.35	0.00	7.90	18.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	8.90	7.30	9.20	25.40	6.30	43.0	112.3
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.60	12.5
Ընդամենը	20.32	20.36	24.91	65.59	56.6	91.0	166.9
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	22.1	156.0
Գոլորշացում լճի մակերևույթից	44.3	37.2	42.0	123.5	102.0	145.8	178.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	44.7	37.6	42.4	124.7	123.1	176.6	300.2
Կուտակում (նվազում)	-12.7	-25.5	-25.5	-63.7	-205.4	-92.2	2.6
Բացարձակ անկապք	-11.68	8.26	8.01	4.59		6.70	
Հարաբերական անկապք %	26.1	18.0	15.9	3.55	0.10	5.90	25.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.43	1277.845	38.0875
Ամսվա վերջին օրը	1900.38	1277.369	38.0238
Միջին ամսական	1900.41	1277.655	38.0621

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

-0.05(մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.10.22 ընթացքում

-0.05(մ)

31.10.22 և 31.10.21 մակարդակի տարբերությունը

-0.13 (մ)

Նույնիքներ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	11.15	11.18	11.43	33.76	24.9	38.4	54.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.82	0.86	0.86	2.54	0.00	8.30	22.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	0.60	7.50	6.30	14.40	0.00	31.4	79.5
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.10	9.90
Ընդամենը	15.17	22.14	21.19	58.50	46.4	82.7	141.1
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	18.8	151.0
Գոլորշացում լճի մակերևույթից	42.9	35.6	29.2	107.7	80.6	116.7	151.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	43.30	36.00	29.60	108.9	93.9	142.0	260.1
Կուտակում (նվազում)	-25.4	-25.5	-12.8	-63.7	-218.2	-66.4	8.80
Բացարձակ անկապք	-2.73	11.64	4.39	13.30		6.90	
Հարաբերական անկապք %	6.30	24.4	12.9	10.9	0.40	7.00	25.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.38	1277.369	38.0238
Ամսվա վերջին օրը	1900.33	1276.894	37.9601
Միջին ամսական	1900.35	1277.084	37.9856

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.05 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.22 30.11.22 ընթացքում -0.10 (մ)
 30.11.22 և 30.11.21 մակարդակի տարբերությունը - 0.14 (մ)

Դեկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.43	11.11	11.79	34.33	20.7	37.0	51.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.86	0.86	0.95	2.67	0.00	8.10	22.9
Տեղումները լճի մակերևույթի վրա	7.90	1.30	0.30	9.50	0.40	22.8	56.4
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	7.90
Ընդամենը	22.79	15.87	15.74	54.40	43.1	71.7	108.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	20.2	177.0
Գոլորշացում լճի մակերևույթից	29.5	24.5	27.8	81.8	62.9	95.4	113.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	29.9	24.9	28.2	83.0	63.0	122.2	240.9
Կուտակում (նվազում)	-25.4	-12.8	-25.5	-63.7	-178.4	-57.3	24.9
Բացարձակ անկապք	18.29	3.77	13.04	35.10		8.50	
Հարաբերական անկապք %	38.0	13.1	31.6	29.7	0.40	7.70	46.2

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.33	1276.894	37.9601
Ամսվա վերջին օրը	1900.28	1276.418	37.8964
Միջին ամսական	1900.30	1276.608	37.9219

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

-0.05 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.12.22 ընթացքում

-0.15 (մ)

31.12.22 և 31.12.21 մակարդակի տարբերությունը

-0.15 (մ)



2022 թվականի հոկտեմբերի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.43մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 11սմ-ով: 2022 թվականի դեկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.28մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 15 սմ-ով: 2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը լճի մակարդակը իջել է 15 սմ-ով:


Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը հոկտեմբեր ամսին կազմել է 2.346 մլն մ³, նոյեմբերին՝ 2.536 մլն մ³, դեկտեմբերին՝ 2.666 մլն մ³:

2022 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1277.845 կմ², ծավալը 38.0875 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար՝ 1276.418 կմ² և 37.8964 կմ³:


Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսներին Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.







Գծապատկեր 76. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 77. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 78. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 79. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 9. Սևանա լճի ջրի որակը 2022 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ՀԱԱ	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	Բոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, ՀԱԱ	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, ՀԱԱ	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	4-րդ	
	Մանգան	5-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	4-րդ	
	Մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրատ իոն, բոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ՀԱԱ	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, ՀԱԱ	4-րդ	

<i>Տեղադրություն, խտրություն</i>	<i>Ջրի որակի բնութագրիչ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Փոքր Սևան, 10մ խտրություն</i>	<i>Բոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 20մ խտրություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ԿՉՆ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խտրություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրատ իոն, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խտրություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրատ իոն, մանգան, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խտրություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խտրություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ԿՉՆ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	

Նոյնիքեր




<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի բնութագրիչ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Երկաթ, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>Երկաթ, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան, բոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, երկաթ, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>Մանգան, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	

Դեկտեմբեր

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի բնութագրիչ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ԼԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի բնութագրիչ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, նիտրատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>Նիտրատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	


ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մաքցենտրան
- Բաղադրում
- Բաղադրում
- ▲ Մակերևութային ջրերի որակի մակերևութային ջրերի որակի
- ▲ Մաքցենտրան ջրերի մակերևութային ջրերի որակի
- Պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«միջակ»	
4-րդ	«անբավարար»	
5-րդ	«վատ»	



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	2.21	2.95	75	2.27	3.07	74	1.99	3.04	65
Վեդի	Ուրցաձոր	0.12	0.51	24	0.20	0.72	28	0.32	0.72	44
Արփա	Ջերմուկ	3.00	2.75	109	2.65	2.66	100	2.34	2.58	91
Արփա	Արենի	6.54	7.30	90	8.38	8.11	103	8.11	7.55	107


Մակերևութային ջրերի որակ

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև, Վայք քաղաքից ներքև և Եղեգնաձոր քաղաքից վերև նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքի հատվածում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 80. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Արարտյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Մալիշկա (N502), Կեչուտ (N2060), Գառնիի (N2045, N2046) բնակավայրերի դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ: Ագարակաձորի (N785) դիտակետում նկատվել է ծախսի կայուն վիճակ: Արարատյան արտեզյան ավազանի հարավ-արևելյան մասում գտնվող Եղեգնավանի N2065, Արարատի N2076 դիտակետերում նկատվել են մակարդակի իջեցումներ:

N2064, N2069 շատրվանող հորատանցքերում նկատվել է ջրի մակարդակի իջեցում: Ծախսի բարձրացումներ են դիտվել Արտաշատի N2062 և Դալարի N2063 շատրվանող հորատանցքերում:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում: N2067 դիտակետի հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:




Գծապատկեր 81. Արարատյան ՋԿՏ-ի բնադրությունների ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 82. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 83. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 84. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում մակարդակների փոփոխությունները





Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը



Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Հարավային ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ ³ /վ								
		Խոկտեմբեր			Նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	0.13	0.95	14	0.13	1.09	12	0.27	0.98	28
Ողջի	Կապան	0.96	2.53	38	0.94	2.07	45	0.94	1.61	58
Որոտան	Գորայք	1.69	2.07	82	1.68	2.02	83	1.68	1.99	84

Մակերևութային ջրերի որակ

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը գետաբերանի հատվածում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Միսիան քաղաքից վերև հատվածում ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Միսիան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Միսիան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև հատվածում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 85. Կարձնան գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 86. Վարարակ գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը:

Դիտակետերի մեծ մասում դիտվել են ծախսի իջեցումներ:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում, որտեղ ցուցանիշները չեն գերազանցել ՍԹԿ-ները:



Գծապատկեր 87. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները

Նիտրատ իոն


Հարավային ՋԿՏ



Գծապատկեր 88. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը


Հանքայնացում, գ/լ

Հարավային ՋԿՏ



Գծապատկեր 89. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածք



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ազատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:


2022 թվականի 4-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են 12-րդ աղյուսակում:

Աղյուսակ 12. Ջրամբարների ջրալցվածությունը 2022 թվականի 4-րդ եռամսյակում


Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը, մլն. խոր.մ	Փաստացի լցվածությունը, հոկտեմբերի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, նոյեմբերի 30-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	79.3	15	94.6	18	126	24
Արփիլիճ	105	39.7	38	40.4	38	41.4	39
Ազատ	70	7.99	11	10.2	15	16.3	23
Ապարան	91	10.2	11	10.9	12	11.7	13
Մարմարիկ	24	1.60	7	1.81	8	1.97	8

Ջրամբարների ջրի որակ

Ախուրյանի ջրամբարի ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ապարանի ջրամբարի ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ազատի ջրամբարի ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կեչուտի ջրամբարի ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 90. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 91. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 13. Ջրամբարների ջրի որակը 2022 թվականի 4-րդ եռամսյակում
Հոկտեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Երևանյան լիճ ջրամբար	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, նիտրատ իոն, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
		Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
		Նիտրիտ իոն	5-րդ	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	Ամոնիում իոն	3-րդ	3-րդ



Նոյեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	Ամոնիում իոն	3	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	Ամոնիում իոն	3	3-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	—	2	2-րդ

Արաքս գետ

ԱՐԱՔՍԻ ԳԵՏԻ ԶՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ

2022 թվականի 4-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 7 դիտակետում: Որոշված ցուցանիշներից գերազանցվել են ԹՔՊ-ի, ԹԿՊ5-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, ցինկի, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների բերված է աղյուսակ 14-ում:



ՊԱՅԱՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ



Աղյուսակ 14. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2022 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Դիտակետի տեղադրություն համար) (դիտակետի	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)											
	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՄԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՄԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	1.2	–	–	–	–	2.5	3.4	–	6.2	–	2.2	–
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	–	1.8	2.4	1.3	1.3	2.9	3.9	2.4	14.4	–	2.6	2.4
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	–	1.9	2.4	1.3	1.3	4.1	3.8	2.4	14.5	–	2.6	2.5

Նոյեմբեր

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)											
	Ամռնի ժամ, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիստի ժամ, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ ժամ, ՄԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՄԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՄԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	1.2	–	–	–	–	2.5	3.4	–	6.2	–	2.2	–
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	–	1.8	2.4	1.3	1.3	2.9	3.9	2.4	14.4	–	2.6	2.4
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	–	1.9	2.4	1.3	1.3	4.1	3.8	2.4	14.5	–	2.6	2.5

Դեկտեմբեր

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)													
	Թթվածնի 5-օրյա կենսաբիսիական պահանջարկ, ՄԹԿ=3 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՄԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՄԹԿ=40 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	–	1.3	1.4	2.9	1.2	1.4	–	2.4	3.7	1.8	13.4	–	1.4	3.2
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.2	1.7	1.6	3.0	1.2	1.4	–	8.2	5.0	2.3	14.0	1.2	3.1	4.0
Շվանիձոր գյուղից ներքև (AMS-6)	–	1.9	1.7	2.8	–	1.4	2.7	140.9	6.8	27.6	29.7	15.4	41.3	5.7

5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:


Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնելով ջրային միջավայր՝ կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2022 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Մեծամոր, Արմավիր, Կապան, Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքներում:

Մեծամոր քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5 անգամ, պղինձի պարունակությունը՝ 16.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 6.1 անգամ, քրոմի պարունակությունը՝ 21.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 24.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 7.0 անգամ:

Արմավիր քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.1-2.5 անգամ, պղինձի պարունակությունը՝ 20.7-28.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 6.8-9.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 14.2-65.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 32.5-41.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.4-2.4 անգամ և արսենի պարունակությունը՝ 4.0-6.5 անգամ:



Գծապատկեր 92. Մետաղների պարունակությունը Արմավիրի մարզի քաղաքային հողերում



Կապան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.1-2.2 անգամ, պղինձի պարունակությունը՝ 107.7-213.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 7.7-23.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-15.7

անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-17.5 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.5-10.7 անգամ և արսենի պարունակությունը՝ 6.5-12.0 անգամ:

Քաջարան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-1.6 անգամ, պղնձի պարունակությունը՝ 230.3-966.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 6.3-18.5 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-7.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 7.0-7.3 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.6 անգամ և արսենի պարունակությունը՝ 10.0-11.5 անգամ:

Մեղրի քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 3.2 անգամ, պղնձի պարունակությունը՝ 70.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.9 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 7.8 անգամ և արսենի պարունակությունը՝ 7.0 անգամ:

Ագարակ քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.8-2.7 անգամ, պղնձի պարունակությունը՝ 140.3-220.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-11.0 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-8.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 4.8-10.5 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-1.4 անգամ և արսենի պարունակությունը՝ 3.0-5.0 անգամ:



Գծապատկեր 93. Մետաղների պարունակությունը Սյունիքի մարզի քաղաքային հողերում

Աղյուսակ 15. Հողային ծածկույթում մետաղների գերազանցումները ՍԹԿ-ներից 2022 թվականի 4-րդ եռամսյակում

Դիտակետի տեղադրություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
	Վանադիում, ՍԹԿ=150նգ/կգ	Պղինձ, ՍԹԿ=3 նգ/կգ	Յինկ, ՍԹԿ=23 նգ/կգ	Քրոմ, ՍԹԿ=6 նգ/կգ	Նիկել, ՍԹԿ=4 նգ/կգ	Կապար, ՍԹԿ=32 նգ/կգ	Արսեն, ՍԹԿ=2 նգ/կգ
ք. Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	-	7.0
ք. Արմավիր, Մարզպետարանի մոտ	2.0	28.3	8.0	23.8	39.5	2.4	6.5
ք. Արմավիր, Մարզադաշտի մոտ	1.1	20.7	6.8	14.2	32.5	-	4.5
ք. Արմավիր, Արարատյան փ.	1.7	24.0	7.3	32.7	41.0	1.4	5.0
ք. Արմավիր, Երևանյան փ.	2.5	28.7	9.7	65.2	36.8	2.0	4.0
ք. Կապան, Կարեն Դեմիրճյան հրապ.	1.9	107.7	7.7	15.7	17.5	1.5	12.0
ք. Կապան, Շինարարների փ.	1.1	150.3	17.3	1.7	11.0	1.9	6.5
ք. Կապան, Բաղաբերդ թ.	2.2	213.3	23.7	5.8	9.3	7.3	10.0
ք. Կապան, Կապան վերև	-	116.7	11.2	9.2	14.3	10.7	9.5
ք. Քաջարան, Լեռնագործների փ.	1.5	966.0	18.5	7.0	7.3	1.6	11.5
ք. Քաջարան, Դեպի Մեղրի գնացող փողոց	1.6	230.3	6.3	1.7	7.0	-	10.0
ք. Մեղրի, Քաղաքապետարանի մոտ	3.2	70.7	5.9	1.7	7.8	-	7.0
ք. Ագարակ, Քաղաքային հրապարակ	-	152.7	11.0	1.7	4.8	1.4	3.5
ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ փ.	2.7	182.3	5.1	8.8	9.0	-	5.0
ք. Ագարակ, Քաղաքապետարանի մոտ	1.8	140.3	10.2	7.8	10.5	1.3	4.5
ք. Ագարակ, Կարճևան ճանապարհի մոտ	1.9	220.3	9.0	1.7	7.3	-	3.0

6. ԱՆՏԱՌՆԵՐ

Անտառապահականություն

Պահպանության վիճակի մասնակի դիտարկում-ուսումնասիրություններ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն», «Զիլիզայի անտառտնտեսություն», «Թումանյանի անտառտնտեսություն», «Արագածոտնի անտառտնտեսություն», «Գորիսի անտառտնտեսություն» և «Միսիանի անտառտնտեսություն», «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղերում:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել 2 /29.08.2021թ. և 18.08.2022թ./ արբանյակային պատկերների համադրման արդյունքում սաղարթում առանձնացված փոփոխությունները: Ուսումնասիրություններ իրականացվել են.

Դովեդի ա/պ 35-րդ քառակուսու 22-րդ հատվածում, ըստ անտառտնտեսության աշխատակիցների բացատրության տվյալ տեղամասում կատարվել է ճանապարհի նորոգման աշխատանքներ:

Զիկատարի ա/պ 13-րդ քառակուսու 14-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կատարվել էր ճանապարհի նորոգման աշխատանքներ:

Զիկատարի ա/պ 13-րդ քառակուսու 6-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային մի քանի քամատապալ, արմատախիլ եղած հաճարենի ծառատեսակի ծառեր: Փայտանյութի մի մասը տեղում չէր:

Զիկատարի ա/պ 14-րդ քառակուսու 19 և 20-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային մի քանի քամատապալ, արմատախիլ եղած հաճարենի ծառատեսակի ծառեր: Փայտանյութի մի մասը տեղում չէր:

Զիկատարի ա/պ 13-րդ քառակուսու 12-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար քամատապալ եղած հաճարենի ծառատեսակի ծառ: Փայտանյութը տեղում էր:

Ջուջևանի ա/պ 30-րդ քառակուսու 20-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում առկա էին հատված ծառերի կոճղեր, որոնց վրա կային կապույտ ներկանյութով արված համարակալումներ: Տվյալ հատվածում 2021թ-ին շահագործվել էր սանիտարական հատման նշանակության հատատեղ (N-01798):

Ջուջևանի ա/պ 15-րդ քառակուսու 14-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար կոտրված և քամատապալ եղած, փուջ բնով, 62-սմ տրամագծով կաղնի ծառատեսակի ծառ: Փայտանյութի մի մասը տեղում չէր:

Ջուջևանի ա/պ 20-րդ քառակուսու 9-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար կոտրված և քամատապալ եղած, փուջ բնով, 150-սմ տրամագծով հաճարենի ծառատեսակի ծառ: Փայտանյութը տեղում չէր:

Կողբի ա/պ 24-րդ քառակուսու 24-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար քամատապալ եղած բոխի ծառատեսակի ծառ: Փայտանյութը տեղում էր:

Նոյեմբերյանի ա/պ 11-րդ քառակուսու 19-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային քամատապալ, կոտրված հաճարենի ծառատեսակի ծառեր: Մի մասի փայտանյութը տեղում չէր:

Նոյեմբերյանի ա/պ 10-րդ քառակուսու 30-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար քամատապալ, հատված կաղնի ծառատեսակի ծառ : Փայտանյութը տեղում չէր:

Նոյեմբերյանի ա/պ 22-րդ քառակուսու 15 և 17-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային քամատապալ, կոտրված հաճարենի ծառատեսակի ծառեր , որոնց վրա կային կարմիր ներկով արված համարակալումներ: Մի մասի փայտանյութը տեղում չէր:

Շլոբկուտի ա/պ 14-րդ քառակուսու 18 և 21-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային քամատապալ, կոտրված տարբեր ծառատեսակի ծառեր : Մի մասի փայտանյութը տեղում չէր:

Շլոբկուտի ա/պ 15-րդ քառակուսու 7-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային կոտրված հաճարենի ծառատեսակի ծառեր: Կային ծառերի փայտանյութի մնացորդներ:

Ոսկեպարի ա/պ 20-րդ քառակուսու 15-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային հատված ծառերի կոճղեր, որոնց վրա առկա էին կապույտ ներկով արված համարակալումներ: Նշված տեղամասում 2021թ-ին շահագործված էր **N-01782** **անտառահատման տոմսով** սանիտարական հատատեղ:

Ոսկեպարի ա/պ 22-րդ քառակուսու 32-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային հատված ծառերի կոճղեր, որոնց վրա առկա էին կարմիր ներկով արված համարակալումներ: Նշված տեղամասում շահագործվում էր **N-02002** **անտառահատման տոմսով** սանիտարական հատատեղ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Զիլիգայի անտառտնտեսություն» մասնաձյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել 2 /29.08.2021թ. և 18.09.2022թ./ արբանյակային պատկերների համադրման արդյունքում սաղարթում առանձնացված փոփոխությունները: Ուսումնասիրություններ են իրականացվել

Շամլուղի ա/ւ 4-րդ քառակուսու 35-րդ հատվածում, դիտարկման արդյունքում պարզվեց, որ տվյալ հատվածում կար քամատապալ եղած հաճարենի տեսակի ծառ:

Շամլուղի ա/ւ 1-ին քառակուսու 10-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային սոճի տեսակի քամատապալ, ձյունակոտոր և չորացած ծառեր:

Շամլուղի ա/ւ 4-րդ քառակուսու 1-ին հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կային հատված ծառերի կոճղեր, որոնց արմատավզիկի մոտ առկա էին կապույտ գույնի ներկով արված համարակալումներ, որը 2021թ N01746 տոմսով սանիտարական հատման նպատակով հատկացված և շահագործված հատատեղ է:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաձյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել 29.08.2021թ. և 29.08.2022թ. արբանյակային պատկերների համադրման արդյունքում սաղարթում առանձնացված փոփոխությունները:

Ուսումնասիրություններ են իրականացվել հետևյալ տարածքներում.

Շնողի ա/ւ 4-րդ քառակուսու 40, 34 և 37-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կատարվել էր անտառմիջյան ճանապարհի նորոգման և կառուցման աշխատանքներ: Ըստ անտառտնտեսության աշխատակիցների ճանապարհի նորոգման և կառուցման աշխատանքները կատարվել են տեղի համայնքների բնակչությանը թափուկ վառելափայտով ապահովելու համար: Վերը նշված տարածքներում կար մեծ քանակությամբ ցցաչոր, քամատապալ, կոտրված ծառեր նաև կար արմատախիլ եղած, այրված ծառերի կոճղեր: Ճանապարհը կառուցելու վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացվել:

Շնողի ա/ւ 4-րդ քառակուսու 40-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար հաճարենի տեսակի 58-սմ տրամագծով 1 հատ հատված և այրված ծառի կոճղ, որի վրա բացակայում էր համարակալումը, պիտակավորումը և մուրճի կնիքը:

Ծաղկաշատի ա/ւ 15-րդ քառակուսու 52-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար տապալված եղած 54-սմ տրամագծով հաճարենի: Փայտանյութի մի մասը տեղում չէր: (թղթապանակ N6):

Շնողի ա/ւ 11-րդ քառակուսու 19-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար տապալված եղած 120-սմ տրամագծով հաճարենի: Փայտանյութը տեղում էր:

Սանահինի ա/ւ 2-րդ քառակուսու 100-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կար վառված տապալած 100-սմ տրամագծով հաճարենի: Փայտանյութը տեղում էր:

Շնողի ա/ւ 18-րդ քառակուսու 5-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում տեղի էր ունեցել սողանք:

Շնողի ա/պ 27-րդ քառակուսու 47 և 48-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց, որ տվյալ հատվածներում կային կոտրված ծառեր, որոնց փայտանյութի մի մասը տեղում չէր: Ըստ աշխատակցի տվյալ հատվածներում տեղի էր ունեցել հրդեհ:

Շնողի ա/պ 9-րդ քառակուսու 4 և 26-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց, որ տվյալ հատվածներում որոնք գտնվում էին Թեղուտի հանքավայրի տարածքում կամ հարակից տարածքում բացակայում էր անտառաշերտը և լցված էր հողաքարային զանգված:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել 29/08/2021թ. և 29/08/2022թ. արբանյակային պատկերների համադրման արդյունքում սաղարթում առանձնացված փոփոխությունները: Ուսումնասիրություններ ենք իրականացրել

Արագածի ա/պ-ն 40°33'21" N 44°28'37" E կորդինատի տարածքում կային չորացած, չորացող և ցցաչոր սոճիներ:

Արագածի ա/պ-ն 40°33'28" N 44°28'22" E կորդինատի տարածքում կային ցցաչոր սոճիներ:

Արագածի ա/պ-ն 40°34'18" N 44°30'17" E կորդինատի տարածքում կային քամատապալ թխենի տեսակի ծառեր:

Եղնջատափի ա/պ 40°30'28" N 44°27'57" E կորդինատի տարածքում, ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում 2022թ-ին հատկացվել է N01720 համարի այլ հատման տոմսով հատատեղը, ուսումնասիրությունների պահին հատատեղն շահագործված էր և հատատեղի տարածքում կառուցվել էր ճանապարհ և տեղադրվել էր ճոպանուղու հենասյուններ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գորիսի և Միսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել 2 /08.06.2021թ. և 09.30.2022թ./ արբանյակային պատկերների համադրման արդյունքում սաղարթում առանձնացված փոփոխությունները: Ուսումնասիրություններ են իրականացվել՝

Գորիսի ա/պ 4-րդ քառակուսու 65-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կատարվել էր հողային և շինարարական աշխատանքներ:

Գորիսի ա/պ 13-րդ քառակուսու 15-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կատարվել էր ճանապարհի նորոգման աշխատանքներ:

Շուռնուխի ա/պ 17-րդ քառակուսու 11, 12, 14, 15-րդ հատվածներում, 22-րդ քառակուսու 4,5,6,7,8,9 և 16-րդ հատվածներում, 24-րդ քառակուսու 19, 23 և 28-րդ հատվածում, 25-րդ քառակուսու 1 և 2-րդ հատվածում և 41-րդ քառակուսու 2-րդ հատվածներում հատկացված է եղել N01962, N01919, N01854, N01910, N01914, N01919, N01920 և N01961 համարի տոմսերով այլ հատման հատատեղերը: Ուսումնասիրությունների պահին հատատեղերը շահագործված էին և արդեն կառուցվել էր Տանձավեր-Շուռնուխ այլընտրանքային ճանապարհը:

Շուռնուխի ա/պ 27-րդ քառակուսու 27-րդ հատվածում, հատկացված է եղել N01964, համարի այլ հատման հատատեղերը: Ուսումնասիրությունների պահին հատատեղը շահագործված էր, գազատար խողովակափ համար:

Միսիանի անտառտնտեսության մասնաճյուղի Շաղաթի ա/պ 26-րդ քառակուսու 25-րդ հատվածում, 27-րդ քառակուսու 8-րդ հատվածում, 28-րդ քառակուսու 3,6,8,9,17,19,28 և 29-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասերում կառուցվել էր Լծեն–Տաթև այլընտրանքային ճանապարհը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղ

Դաշտային դիտարկում-ուսումնասիրություններն իրականացվել են անտառտնտեսության աշխատակիցների հետ համատեղ, առկա խնդիրները տեղորոշել՝ Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով: Դաշտային դիտարկումների համար հիմք են հանդիսացել Սենտինել արբանյակային պատկերների համադրման աղյուսքում սաղարթում առանձնացված փոփոխությունները/16.08.2021թ. և 06.08.2022թ./:

Ուսումնասիրություններ են իրականացվել:

Կապանի ա/պ 33-րդ քառակուսու 16,20,21,24 և 31-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում 2021 թ–ին հատկացված է եղել N-01864 անտառահատման տոմսով այլ հատման նշանակության հատատեղ և վերը նշված տարածքում կառուցվել էր Կապան–Ճակատեն ճանապարհը:

Կապանի ա/պ 34-րդ քառակուսու 7,2,1-15-րդ հատվածում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում կատարվել էր ճանապարհի նորոգման աշխատանքներ:

Դավիթ-Բեկի ա/պ 81-րդ քառակուսու 21-րդ հատվածում, 24-րդ քառակուսու 2,3,4,5,6,7,8,9,11,12-րդ հատվածներում, 25-րդ քառակուսու 6,10,15,18,21-րդ հատվածներում, 87-րդ քառակուսու 1-ին հատվածում, արդյունքում պարզվեց որ տվյալ տեղամասում հատկացված է եղել N-01365 անտառահատման տոմսով այլ հատման նշանակության հատատեղ և վերը նշված տարածքում կառուցվել էր ճանապարհը:

Սյունիքի ա/պ 7-րդ քառակուսու 15,16,18,19,21,22,25,26,27,31,32,33,36,37 և 39-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց, որ տվյալ տեղամասում հատկացված է եղել N-01930 անտառահատման տոմսով այլ հատման նշանակության հատատեղ և վերը նշված տարածքում կառուցվել էր Վերին Խոտանան–Տանձավեր ճանապարհը:

Արծվանիկի ա/պ 7-րդ քառակուսու 1,2,3,5,6,7,8,9,10,11,12,13,20,23,26,29 -րդ հատվածում, 8-րդ քառակուսու 5,9,10,12,13,19,20 -րդ հատվածներում, 9-րդ քառակուսու 16,18,23,28,30,35-րդ հատվածներում, 10-րդ քառակուսու 1,2,3,4,5,6,8,10,13,17,18,19,20,24,30,31,36,37-րդ հատվածներում, արդյունքում պարզվեց որ տվյալ տեղամասում հատկացված է եղել N-02021 անտառահատման տոմսով այլ հատման նշանակության հատատեղ և վերը նշված տարածքում կառուցվել էր Վերին Խոտանան–Տանձավեր ճանապարհը:

